անուանիք 'ի վէպս Ս. Գրոց՝ 'ի լերանց սատի իջին և կալան զմիահեծան տէրութիւն Ասիոյ, որ յանուն մայրաքաղաքին՝ Բաբելացւոց կոչեցաւ պետութիւն: — Առ ահի Քրդաց անհամարձակ է սրտ երկիրն, և սակաւ ամք են յորմէ հետէ մուտ գտին Ճանապարհորդք ոմանք 'ի կողմանս ուրեք, վասն որոյ և մեք ոչ ունիմք երկարագոյնս ինչ և ստոյգ աւանդել զհարաւոյ Հայաստանեայց: — Բայց յիշեսցուք այսչափ, զի արևմտեանն Քրդաստան այսինքն ձախակողմն Տիգրիսի ՊՕՀՏԱՆ կոչի, և լերինքն Պօհտան լերինք, որք զնստագոյնք են քան զբարձրաւանդակն Վանայ, բայց յարևելակողմանն ամբառնան Ճիւտի լերինք բարձունք 12 կամ 13000': Հիւսիսակողմն արևմտեանս Քրդաստանի է ՃԷԶԻՐԷ գաւառ, յանուն քաղաքին որ յեզր Տիգրիսի, և փոքաւ միով շրջապատեալ կղզիաձև, վասն որոյ և Ճէզիրէ կոչեցաւ յԱրաբացւոց, որ և առ նախնիս մեր ԳԶԻՐԱ կոչի, իսկ 'ի հնագունիցն օտարաց Զաբդա կամ Բեզաբդա քաղաք Զաբտիկեան գաւառի, և կարծի մայրաքաղաք Զարբինոսի կամ Զարուանայ Թագաւորի Կորդուաց, զոր սպանն Տիգրան Բ. վասն դաշնակցելոյ նորա ընդ Լուկուլլեայ. մինչև 'ի գրունս քաղաքիս այսօրիկ հալածեաց քաջակորովն Մուշեղ զՇապուհ 'ի Դ դարու: Ի յետին ապստամբութեան և մարտս Քրդաց յամին 1836 անչքացաւ քաղաքս, և են 'ի նմա իբրև 3000 բնակիչք, ընդ որս և Քաղդէացիք և Յակոբիկք: Կոչի և Ճէզիրէ-Իպն-Օմէր:

98. Ի հիւսիսոյ Ճէզիրէի կայ ՖԷՆՏԷԳ վիճակ, համանուն ամրոցաւ. կայ և այլ ամրոց Ֆինիկ անուն ընդ մէջ նորա և Ճէզիրէի: — Ցելից և 'ի հարաւոյ Ճէզիրէի կայ ԶԱԽՈՒ վիճակ համանուն քաղաքաւանաւ առ Քապուր կամ Խապուր գետով օժանդակաւ Տիգրիսի. են 'ի նմա քարաշէն բնակարանք և կամուրջք: Ի հարաւոյ նորա կան Չուտի կամ Ճէպէլ-Էպիադ (սպիտակ) լերինք. յորոց Թիկանց յարևմտից առ Տիգրիսիւ Ֆիշապուր բերդաւան, որ աւերեցաւ 'ի Րէշիտ փաշայէ 'ի մարտին ընդդէմ Քրդաց: — Միջակողմն կամ հարաւակողմն հայկական Քրդաստանիս կոչի ՊԱՀՏԻՆԱՆ, յորում՝ գաւառ երևելի է ԱՄԷՏԻԷ, ընդ մէջ Խաբուրայ և մեծին Զապայ, քաղաքն համանուն որ և ԵԿԲԱՏԱՆ կոչիւր, 'ի լեռնավայրի 4000' բարձու, խանգարեցաւ 'ի մարտին Քրդաց. ունի տակաւին մնացուածս հնութեանց քարակերտ շինուածոց և պատկերաց, որք 'ի Սասանեանց կամ յառաջ քան զսոսա 'ի մերոյն Արտաշիսէ Բ գործեալք են. այժմ նուազեալ են բնակիչքն իբրև 400 տունք, յորս Հայք սակաւք յոյժ, և Քաղդէացիք ոչ կարի բազում. որք բազմաթիւք ևս են 'ի ՊԷՐՎԱՐԻ յարակից վիճակին Ամէտիոյ: Ի հիւսիսոյ Ամէտիոյ կայ ԱՇԻԹԱ վիճակ և աւան, և յելից նորա ԶԱԽԻԹԱ, բնակեալք 'ի Քաղդէացւոց, յորոց շատ զոք սրածարակ արար Պէտէրխան պէյ:

94. Արևելեան մասն Քրդաստանի, 'ի հիւսիսոյ Պահտինանայ և 'ի հարաւոյ արևելեան հարաւային վիճակաց Վանայ՝ ՀԷՔԵԱՐԻ կոչի, և է բարձրաւանդակ լեռնախիտ, յոր խաղայ մեծն ԶԱՊ կամ ԶԱԽ գետ, և յելից կողմանէն ամբառնան հսկայաձև լերինք Կորդուաց Ճուլար կամ Թուրա-Ճէլու կոչեցեալք, ըստ ոմանց հաւասար Մասեաց և Կովկասու. և 'ի սոսին աւանդեն բնակիչք կողմանն նստեալ զտապանն, ըստ ոմանց 'ի նախնեաց՝ որք 'ի լերինս Կորդուաց ասէին զէջս նորին: — Ի բարձրաւանդակս 8-10000' բարձունս են հանդրուանք ամարանոցք գեղջկացն՝ Եայլա կոչեցեալք: Քրդաց կալեալ է զերկիրս զայս, և յանուն նոցա հատեալ 'ի գաւառս գաւառս՝ կոչի ԹԻԱՐԻ, ՏՈՒՇՔԻ, ՁՈՄԱ, և այլն. այլ 'ի միջավայրս անդ լերանցն 'ի վաղնջուց դարուց բնակութիւն կալեալ է Քաղդէացւոց կամ Ասորեաց նեստորականաց, զահամանօք ՃՈՒԼԱՄԵՐԿ կամ ԶՈՒԼԱՄԵՐԿ գաւառի, որք և ազատաբար կեին զդէմ ունելով Քրդաց դարս յոլովս. մինչև յամին 1843 և 1846 Պէտէր խան բէկ Ճէզիրէի դաւանօք և բռնութեամբ ընկճեալ՝ կոտորեաց 'ի Լիզան և յայլ գեօղս ոգիս աւելի քան զբիւր մի և զբազումս փախստականս ցրուեաց, վասն որոյ և ինքն նիզակակցօքն ձերբակալ եղեալ յՕսմանեան գնդէն վտարեցաւ 'ի Կրետէ: — Քաղաքն ԶՈՒԼԱՄԵՐԿ որ է ՁԼՄԱՐ բերդ հին կամ ԶԱՑԼԱՄԱՐ, կայ 'ի բարձու 5070' ոտից, առ Հաքեարի գետակաւ՝ որ է նոյն ինքն Զապ, ամրոցաւ և կաւակերտ տամբք իբր 500ովք. զորս անչքեցոյց բռնութիւն Նուրուլլահայ: — Ի հիւսիսոյ նորա կան Բաշի գեօղ և Քոչհաննէս ուր նստի պատրիարք Քաղդէացւոցս, աւերեալ 'ի Պէտէրխանայ՝ դարձեալ շինութիւն առնու: — Ի հիւսիսի Զուլամերկոյ կայ Արէպ թաղ լեառն, յորոյ հարաւոյ Սէինգ կամ Սրինգի գիւղ, որ է հին բերդ Հայոց. և առ նովաւ հովիտ ծծմբաբեր:



Վանք մերձ ի Ճուլամերկ. Monastère près de Djoulamerg.

100. Ի հիւսիսոյ արևելից Զուլամերկոյ, 'ի մօտից Սալամաստայ գաւառի Պարսից՝ կայ վիճակն ԱԼԻՊԱՂ, որ է ԱՂԲԱԿ, կրկին գաւառք Կորդուաց և Վասպուրականի. որոյ գլխաւոր աւան է Պաշգալէ 'ի բարձու քարաժեռի իբրև 7000'. երբեմն աթոռ Նուր-Ուլլահ Քուրդ բէկի բռնաւորի, նիզակակցի Պէտէրխանայ, որ ամրութեամբ անմատոյց բերդին ընդ երկար զդէմ կալաւ Օսմանեանց, և նուաճեցաւ